Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 15-ի N 1274 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2019 թվականի
մայիսի 30-ի N 685-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են դատավորի թեկնածուի հավակնորդի կամ դատավորի թեկնածուի կամ դատավորի բժշկական զննության իրականացման և դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների բացակայության մասին փաստաթղթի (այսուհետ՝ փաստաթուղթ) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Բժշկական զննությունն իրականացնում են՝

1) քաղաքային բնակչության համար՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող այն կազմակերպությունը (այսուհետ՝ ԱԱՊ հաստատություն), որտեղ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N 48-Ն հրամանով սահմանված կարգով գրանցված է դատավորի թեկնածուի հավակնորդը կամ դատավորի թեկնածուն կամ դատավորը.

2) գյուղական բնակչության համար՝ այն ԱԱՊ հաստատությունը, որտեղ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով իրականացվում են տվյալ տարածաշրջանի գյուղական

բնակավայրերի բնակչության նեղ մասնագիտական խորհրդատվությունները և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները:

3. Դատավորի թեկնածուի հավակնորդը կամ դատավորի թեկնածուն կամ դատավորը ԱԱՊ հաստատությունում բժշկական զննություն անցնելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ, սույն կարգի 5-րդ կետով նախատեսված թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, իսկ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը:

4. Այն դեպքում, երբ ԱԱՊ հաստատությունը չի իրականացնում հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում, հոգեկան հիվանդությունների բացակայությունը հավաստող տեղեկանքը տրամադրվում է տվյալ տարածքը սպասարկող հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից:

5. Թմրաբանական հիվանդությունների բացակայությունը հավաստող տեղեկանքը տրամադրվում է թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից՝ բժիշկ-թմրաբանի զննության և դատավորի թեկնածուի հավակնորդի կամ դատավորի թեկնածուի կամ դատավորի կենսամիջավայրում հոգեներգործուն նյութերի հայտնաբերման նպատակով իրականացված թունաքիմիական հետազոտության արդյունքների հիման վրա:

6. Դատավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատավորին սույն կարգի 2-րդ կետով նախատեսված բժշկական զննության իրականացման և փաստաթղթի տրամադրման նպատակով ԱԱՊ հաստատության տնօրենի, իսկ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենի հրամաններով ստեղծվում են մշտապես գործող բժշկական հանձնաժողովներ:

7. ԱԱՊ հաստատության մշտապես գործող բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ բժշկական հանձնաժողով) կազմում ընդգրկվում են թերապևտը կամ

ընտանեկան բժիշկը, նյարդաբանը, սրտաբանը, քիթ-կոկորդ-ականջաբանը, ակնաբույժը, ուռուցքաբանը (առկայության դեպքում), ներզատաբանը, հոգեբույժը (առկայության դեպքում): Առանձին դեպքերում, ելնելով կոնկրետ հիվանդությունից կամ վիճակից, բժշկական հանձնաժողովը, ԱԱՊ հաստատության տնօրենի հրամանով, կարող է համալրվել նաև տվյալ բժշկական կազմակերպության այլ բժիշկ-մասնագետներով:

8. Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենը սույն կարգի 4-րդ կետով նախատեսված տեղեկանքը դատավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատավորին տրամադրում է դիմելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ արտահիվանդանոցային պայմաններում հնարավոր չէ գալ եզրահանգման հոգեկան հիվանդությունների առկայության կամ բացակայության վերաբերյալ, ապա իրականացվում է հետազոտում ցերեկային ստացիոնարի կամ հիվանդանոցային պայմաններում: Հետազոտության արդյունքների հիման վրա հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենը սույն կարգի 4-րդ կետով սահմանված տեղեկանքը դատավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատավորին է տրամադրում դիմելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տնօրենը սույն կարգի 5-րդ կետով նախատեսված տեղեկանքը դատավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատավորին է տրամադրում ոչ հանձնաժողովային կարգով, համապատասխան հետազոտությունների արդյունքների հիման վրա՝ դիմելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10. ԱԱՊ հաստատության տնօրենը սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկանքները ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դատավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատավորին է տրամադրում փաստաթուղթը՝ հիմք ընդունելով բժշկական հանձնաժողովի կող-

մից տրված եզրակացությունը, սույն կարգի 5-րդ կետով նախատեսված թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը, իսկ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից տրված տեղեկանքը:

11. Բժշկական զննության արդյունքում բժշկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության վերաբերյալ տվյալները մուտքագրվում են էլեկտրոնային առողջապահության համակարգ, ինչպես նաև գրանցվում են ամբուլատոր բժշկական քարտում և վավերացվում հանձնաժողովի անդամների ստորագրություններով:

12. Փաստաթուղթը վավեր է տալու պահից մեկ ամիս ժամկետով:

13. Փաստաթուղթը կորցնելու կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում դատավորի թեկնածուի հավակնորդը կամ դատավորի թեկնածուն կամ դատավորը դիմում է ԱԱՊ հաստատություն՝ փաստաթղթի կրկնօրինակը ստանալու համար:

14. Փաստաթղթի կրկնօրինակը դատավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատավորին տրամադրվում է սկզբնական փաստաթղթում ամրագրված ժամկետով, դիմելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ փաստաթղթի կրկնօրինակի վերևի աջ անկյունում նշելով «Կրկնօրինակ» բառը, որի վրա դրվում է ԱԱՊ հաստատության կնիքը (առկայության դեպքում):

15. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 113-րդ հոդվածի 4-րդ մասով և 159-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում դատավորի թեկնածուի հավակնորդի կամ դատավորի թեկնածուի կամ դատավորի բժշկական զննությունը կազմակերպվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից սույն կարգի 2-րդ կետով նախատեսված ԱԱՊ հաստատություն գրավոր դիմում ներկայացնելու դեպքում:

16. ԱԱՊ հաստատության տնօրենը սույն կարգի 15-րդ կետով նախատեսված դեպքերում բժշկական զննությունն ավարտելուց և փաստաթուղթը դա-

տավորի թեկնածուի հավակնորդին կամ դատավորի թեկնածուին կամ դատա-վորին տրամադրելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է Բարձրագույն դատական խորհրդին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ